

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 32/3

8 նոյեմբերի 2016թ.

Քննարկվեց Միսակ Մելքոնյանի ներկայացուցչի գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի իրավաբանական վարչության պետի 09.09.2016թ. թիվ 330940/01 որոշման դեմ:

Միսակ Մելքոնյանի ներկայացուցչի գանգատում բերված փաստարկները.

28.06.2016թ. թիվ 1109612 ակտում նշված 180.000 դրամը վճարվել է 27.08.2016թ-ին, սակայն ըստ 13.09.2016թ. թիվ 1372/1 որոշման, պարտավորությունը կազմում է 180.000 դրամ, որն առաջացել է 28.06.2016թ. թիվ 1109612 ակտից:

Ինչպես նաև, թիվ 330940/01 որոշմամբ նշանակվել է 20.000 դրամ տուգանք՝ ուշացման համար:

Գանգատաբերը տեղեկացնում է, որ Միսակ Մելքոնյանը ոչ մի տեսակի վճարման ուշացում չունի:

Ելնելով վերոգրյալից՝ գանգատաբերը խնդրում է չեղարկել 20.000 դրամ տուգանքի վերաբերյալ թիվ 330940/01 որոշումը:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության.

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի իրավաբանական վարչության պետը, քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ 09.09.2016թ. թիվ 4365 արձանագրությունը և կից նյութերը պարզել է, որ Ա/Ձ Միսակ Մելքոնյանը սահմանված ժամկետում չի վճարել 2016թ. հուլիս ամսվա հարկերը: Վճարման ժամկետ է սահմանված եղել մինչև 22.08.2016թ.: Նկատի ունենալով, որ արարքը նախատեսված է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 170.3-րդ հոդվածով, ուստի ղեկավարվելով նույն օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով, 244.2-րդ, 281-րդ հոդվածներով և 282-րդ հոդվածի 1-ին կետով ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի իրավաբանական վարչության պետի կողմից 09.09.2016թ-ին ընդունվել է վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 330940/01 որոշումը (այսուհետ նաև՝ Որոշում), որով Ա/Ձ Միսակ Մելքոնյանը ենթարկվել է վարչական պատասխանատվության՝ գումարով 20.000 դրամի չափով:

Քննարկվող դեպքում Ա/Ձ Միսակ Մելքոնյանը 2016 թվականի հուլիս ամսվա համար ներկայացված եկամտային հարկի հաշվարկով արտացոլել է 184.200 դրամի չափով պարտավորություն, որի վճարման ճամկետը սահմանված է եղել մինչև 22.08.2016թ.-ը: Սակայն մինչև 28.08.2016թ.-ի դրությամբ Ա/Ձ Միսակ Մելքոնյանը եկամտային հարկի գծով ունեցել է 78.338 դրամի չափով չկատարված հարկային պարտավորություն:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 170.3-րդ հոդվածի համաձայն՝ հարկերը սահմանված ժամկետներում չվճարելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչև քսանապատիկի չափով:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի իրավաբանական վարչության պետի կողմից 09.09.2016թ-ին ընդունվել է թիվ 330940/01 որոշումը, որով Ա/Ձ Միսակ Մելքոնյանը հարկերը սահմանված ժամկետներում չվճարելու համար ենթարկվել է վարչական պատասխանատվության:

Հանձնաժողովը գտնում է, որ քննարկվող դեպքում Որոշումը կայացվել է ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան, հիմնավոր է և ենթակա է կատարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է՝

ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի իրավաբանական վարչության պետի 09.09.2016թ. թիվ 330940/01 որոշումը թողնել անփոփոխ, իսկ գանգատը՝ մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողով կամ ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ